



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2004թ. նոյեմբերին /վերլուծություն/

2004թ. նոյեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 9165 գործարքներ, որոնց քանակը 2003թ. նոյեմբերի համեմատ աճել է 30.4%-ով, իսկ 2004թ. հոկտեմբերի համեմատ՝ 5.6 %-ով:

2004թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2004թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2004թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3729 օտարման գործարքների 89.3%-ը կազմել են առուվաճառքները, 10.4%-ը՝ նվիրատվությունները և 0.3%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 42.7%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 42.9%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2004թ. նոյեմբերին, 2003թ. նոյեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 18.9%-ով, իսկ 2004թ. հոկտեմբերի համեմատ՝ 2.8%-ով: 2004թ. նոյեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի 1332 առուվաճառքի գործարքների 62.9 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2003թ. նոյեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 4.1%-ով, իսկ 2004թ. հոկտեմբերի համեմատ՝ 5.4%-ով:

2004թ. նոյեմբերին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

/1ԱՄՆ դոլարը 2004թ. նոյեմբերին համարժեք է 503.0դրամ/

Համայնքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2004թ. նոյեմբերին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
		նոյեմբեր 2003թ.	նոյեմբեր 2004թ.	հոկտեմբեր 2004թ.
Կենտրոն	350.0-970.0	408.5	497.8	488.5
Արաբկիր	250.0-560.0	306.4	401.5	390.1
Քանաքեռ-Զեյթուն	130.0-330.0	194.0	242.8	236.7
Նոր-Նորք	115.0-250.0	152.1	216.1	207.5
Ավան	120.0-230.0	152.3	204.5	200.4
Էրեբունի	120.0-300.0	164.3	195.8	192.5
Շենգավիթ	120.0-270.0	163.4	234.5	227.5
Դավթաշեն	130.0-320.0	195.8	249.7	244.8
Աջափնյակ	120.0-300.0	173.1	228.1	224.7
Մալաթիա-Սեբաստիա	120.0-270.0	159.6	226.9	223.0
Նուբարաշեն	75.0-120.0	70.5	93.8	90.7
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	75.0-970.0	194.5	253.8	247.9

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2004թ. նոյեմբերին, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գների ամսեկան աճը կազմել է 2.4% :

2004թ. նոյեմբերին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 486 բնակարաններ, որոնց քանակը 2003թ. նոյեմբերի համեմատ աճել է 9.5%-ով, իսկ 2004թ. հոկտեմբերի համեմատ 0.4%-ով:

2004թ. նոյեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2004թ. նոյեմբերին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
			նոյեմբեր 2003թ.	նոյեմբեր 2004թ.	հոկտեմբեր 2004թ.
Արագածոտն	Աշտարակ	40.0-95.0	62.8	72.0	71.8
	Այարան	20.0-50.0	27.4	38.0	38.0
	Թալին	20.0-50.0	25.2	32.0	31.9
Արարատ	Արտաշատ	40.0-88.0	54.8	59.5	59.5
	Մասիս	40.0-90.0	54.4	64.2	63.2
	Վեդի	30.0-60.0	31.7	42.8	42.7
	Արարատ	30.0-60.0	31.6	42.5	42.0
Արմավիր	Վաղարշապատ	50.0-130.0	84.7	109.9	106.8
	Արմավիր	40.0-80.0	45.7	67.6	65.6
	Մեծամոր	20.0-50.0	30.9	32.7	32.7
Գեղարքունիք	Սևան	20.0-55.0	30.7	35.8	34.8
	Գավառ	20.0-50.0	30.5	33.6	33.6
	Մարտունի	20.0-60.0	29.7	36.6	36.6
	Վարդենիս	10.0-35.0	17.3	17.6	17.6
	Ճամբարակ	13.0-30.0	17.0	17.9	17.9
Լոռի	Վանաձոր	30.0-90.0	62.0	65.8	63.8
	Ստեփանավան	20.0-55.0	33.4	37.0	36.9
	Սյիտակ	30.0-70.0	24.1	44.7	41.5
	Ալավերդի	15.0-40.0	25.6	26.5	26.5
	Տաշիր	15.0-45.0	19.4	25.5	25.5
Կոտայք	Աբովյան	45.0-150.0	84.2	110.5	108.8
	Նոր Հաճն	50.0-110.0	52.3	80.5	75.5
	Բյուրեղավան	30.0-90.0	35.2	50.4	49.2
	Եղվարդ	35.0-80.0	40.7	55.8	53.5
	Հրազդան	30.0-85.0	31.0	47.8	45.8
	Ծաղկաձոր	40.0-130.0	75.8	92.5	90.1
	Չարենցավան	30.0-85.0	31.1	44.8	42.0
Շիրակ	Գյումրի	40.0-120.0	71.9	77.6	77.5
	Արթիկ	20.0-45.0	25.3	31.5	31.4
	Մարալիկ	18.0-45.0	23.7	28.4	28.4
Սյունիք	Գորիս	25.0-70.0	29.7	40.0	38.0
	Կապան	20.0-60.0	29.4	34.9	33.9
	Սիսիան	20.0-60.0	27.6	37.8	35.7
	Մեղրի	18.0-58.0	25.2	25.9	25.7
	Ազարակ	18.0-50.0	24.0	25.2	25.2
	Քաջարան	13.0-40.0	18.5	19.9	19.9
Վայոց Ձոր	Վայք	30.0-70.0	35.3	43.7	40.4
	Եղեգնաձոր	40.0-90.0	46.9	55.8	53.8
	Ջերմուկ	40.0-100.0	41.2	62.8	59.5
Տավուշ	Դիլիջան	30.0-70.0	36.2	45.1	44.8
	Իջևան	40.0-90.0	40.4	58.2	56.6
	Բերդ	25.0-60.0	29.3	36.4	35.7
	Նոյեմբերյան	15.0-45.0	26.8	27.7	27.7

2004թ. նոյեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գների ամսական աճը կազմել է 2.4% :

2004թ. նոյեմբերին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 458 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 116, մյուս մարզերում միասին վերցրած՝ 342: 2004թ. հոկտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը աճել է 5.8%-ով, ընդ որում Երևան քաղաքում աճել է 14.9%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել է 3.0%-ով: 2003թ. նոյեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 2.6%-ով, ընդ որում՝ Երևանում նվազել է 10.8%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ աճել է 0.6%-ով:

2004թ. նոյեմբերին Երևան քաղաքի համայնքներում անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Համայնք	Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2004թ. նոյեմբերին /ԱՄՆ դոլար/	Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան շուկայական միջին գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
		նոյեմբեր 2003թ.	նոյեմբեր 2004թ.	հոկտեմբեր 2004թ.
Կենտրոն	255.0-1000.0	422.5	500.1	493.5
Արաբկիր	205.0-900.0	310.9	403.4	396.5
Քանաքեռ-Զեյթուն	140.0-360.0	196.3	244.8	238.3
Նորք-Մարաշ	120.0-550.0	311.5	347.9	346.8
Ավան	125.0-280.0	151.5	205.9	202.4
Էրեբունի	130.0-320.0	162.6	197.8	195.4
Շենգավիթ	120.0-350.0	164.1	237.1	230.5
Դավթաշեն	140.0-700.0	194.3	251.3	249.9
Աջափնյակ	125.0-320.0	169.9	230.9	227.2
Մալաթիա-Սեբաստիա	125.0-300.0	158.8	228.9	225.1
Նուբարաշեն	65.0-150.0	73.4	95.1	91.5
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	65.0-1000.0	210.5	267.6	263.4

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2004թ. նոյեմբերին անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գների, ներառյալ տնամերձի միավորի գնի, ամսական աճը կազմել է 1.6%:

2004թ. նոյեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2004թ. նոյեմբերին /ԱՄՆ դոլար/	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան շուկայական միջին գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
			նոյեմբեր 2003թ.	նոյեմբեր 2004թ.	հոկտեմբեր 2004թ.
Արագածոտն	Աշտարակ	60.0-110.0	82.9	87.2	87.1
	Ապարան	25.0-60.0	38.8	39.5	39.3
	Թալին	20.0-65.0	28.1	35.2	35.2
Արարատ	Արտաշատ	50.0-90.0	61.9	62.3	62.2
	Մասիս	50.0-90.0	62.4	65.5	64.7
	Վեդի	25.0-70.0	36.3	49.4	49.4
	Արարատ	20.0-65.0	37.5	46.1	45.9
Արմավիր	Վաղարշապատ	80.0-130.0	89.7	111.1	107.8
	Արմավիր	35.0-90.0	52.3	69.0	66.3
Գեղարքունիք	Սևան	20.0-60.0	36.4	42.3	42.3
	Գավառ	20.0-60.0	39.9	39.9	39.9
	Մարտունի	20.0-60.0	33.9	41.1	41.1
	Վարդենիս	15.0-50.0	21.3	21.8	21.7
	Ճամբարակ	15.0-50.0	19.6	22.4	22.4
Լոռի	Վանաձոր	50.0-90.0	68.9	70.9	70.7
	Ստեփանավան	15.0-60.0	33.7	49.4	48.3
	Սպիտակ	20.0-60.0	24.1	49.4	47.7
	Ալավերդի	15.0-50.0	25.9	29.7	28.9
	Տաշիր	15.0-55.0	19.9	28.5	27.6
Կոտայք	Աբովյան	70.0-130.0	92.5	114.3	109.7
	Նոր Հաճն	40.0-90.0	54.2	81.6	76.1
	Բյուրեղավան	25.0-70.0	38.2	51.4	50.7
	Եղվարդ	40.0-80.0	47.3	57.5	54.3
	Հրազդան	25.0-65.0	40.1	49.7	46.0
	Ծաղկաձոր	70.0-120.0	85.2	98.6	97.5
	Չարենցավան	25.0-65.0	33.4	45.7	42.8
Շիրակ	Գյումրի	60.0-120.0	90.9	91.8	91.8
	Արթիկ	20.0-55.0	28.7	33.5	33.5
	Մարայիկ	15.0-50.0	23.9	29.7	29.7
Սյունիք	Գորիս	20.0-60.0	31.7	43.1	39.5
	Կապան	20.0-60.0	31.1	36.4	36.4
	Սիսիան	20.0-60.0	28.7	39.0	37.4
	Մեղրի	15.0-50.0	28.2	28.7	28.7
	Ագարակ	15.0-50.0	26.4	28.3	28.3
Վայոց Ձոր	Վայք	20.0-60.0	37.0	44.8	41.5
	Եղեգնաձոր	35.0-80.0	49.3	56.6	54.7
	Ջերմուկ	25.0-65.0	43.4	44.3	44.3
Տավուշ	Դիլիջան	20.0-70.0	39.2	57.0	55.9
	Իջևան	35.0-80.0	41.2	59.1	57.7
	Բերդ	20.0-60.0	30.9	37.2	36.0
	Նոյեմբերյան	20.0-60.0	30.8	31.1	31.1

2004թ. նոյեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գների, ներառյալ տնամերձի միավորի գնի, ամսեկան աճը կազմել է 2.3%:

Ընդհանուր առմամբ, 2004թ. նոյեմբերին հանրապետությունում օտարվել են 1827.86 հա /այդ թվում՝ 41.21 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 1742.02 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում 1808.42հա հողերի /այդ թվում՝ 40.06 հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 1725.07հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Վաճառվել են նաև 4 միավոր /2.81հա/ արդյունաբերական օբյեկտների հողեր, որից 2 -ը /2.00 հա/ Երևանում :

Օտարված 19.02 հա ընդհանուր մակերեսով հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ, որից 17.37 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Փոխանակման միջոցով օտարվել են 0.41հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում՝ 0.41 հա Երևանում/

Շողերի առուվաճառքների առավել մեծ մակերեսներ արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 1237.37 հա, որից 1232.63 հա գյուղատնտեսական նշանակության են:

Ստորև ներկայացվում է 2004թ. նոյեմբերին մարզերում հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը, որտեղ ներառված չեն վարձակալության իրավունքի վաճառքի և արդյունաբերական օբյեկտների հողերը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	43	16.43	20	3.54	0	0.00	87	12.60	38	5.33
Արագածոտն	1	80.00	1	0.14	2	0.03	30	98.17	43	4.79	0	0.00
Արարատ	57	131.98	77	8.50	0	0.00	104	38.71	46	3.93	0	0.00
Արմավիր	86	993.38	14	2.04	0	0.00	112	239.25	29	2.70	0	0.00
Գեղարքունիք	0	0.00	4	1.32	0	0.00	9	7.43	1	0.07	2	0.47
Լոռի	0	0.00	1	0.03	0	0.00	17	20.58	3	0.27	2	0.06
Կոտայք	4	4.20	1	0.08	0	0.00	84	50.83	143	14.58	0	0.00
Շիրակ	3	2.92	1	0.12	5	1.76	21	30.37	4	0.72	0	0.00
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	17	16.45	1	0.17	0	0.00
Վայոց ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	15	9.39	2	0.16	2	0.02
Տավուշ	0	0.00	0	0.00	2	0.32	2	1.41	3	0.22	0	0.00
Ընդամենը	151	1212.48	142	28.66	29	5.65	411	512.59	362	40.21	44	5.88

2004թ. նոյեմբերին հանրապետությունում արձանագրվել են հողերի 1144 առուվաճառքի գործարքներ /2003թ նոյեմբերին՝ 603 /, այդ թվում 562-ը՝ գյուղատնտեսական նշանակության /309/, 578-ը՝ բնակավայրերի /292/, 4-ը՝ արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ /2/:

2004թ. նոյեմբերին հողերի առուվաճառքներից 302-ը իրականացվել են աճուրդների միջոցով /2003թ նոյեմբերին՝ 57/, այդ թվում 52-ը՝ /16.68 հա/ Երևանում /22/, իսկ 250-ը՝ /1143.68 հա/ մյուս մարզերում /35/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 147-ը միավորը /1129.28 հա/ հանդիսացել են գյուղատնտեսական /2003թ նոյեմբերին՝ 10/, 140-ը՝ /27.30 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/ /47/, 14-ը՝

/3.13 հա/ հասարակական կառուցապատման հողեր /0/ և 1-ը /0.65հա/ հասարկունաբերական օբյեկտի հող /0/:

2004թ. նոյեմբերին հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի 562 առուվաճառքների գործարքներից 147-ն իրականացվել են աճուրդների 3-ը դատարանի վճռով և 1-ը՝ ուղղակի վաճառքի միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						24	9.70	800.0	10000.0	3100.0
Ապարան								200.0	1700.0	610.0
Թալին						5	83.55	200.0	1680.0	470.0
Ծաղկահովիտ						1	4.92	170.0	2100.0	260.0
Արարատի մարզ										
Արտաշատ	17	67.43	150.0	1050.0	240.0	30	8.90	740.0	12000.0	2200.0
Մասիս	12	41.76	160.0	6140.0	1170.0	18	7.67	400.0	8800.0	1800.0
Վեդի	28	22.79	2675.0	5350.0	3490.0	56	22.13	450.0	7200.0	1400.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						58	141.07	650.0	4650.0	1325.0
Բաղրամյան	33	863.21	40.0	890.0	165.0	23	73.15	200.0	1500.0	570.0
Վաղարշապատ	53	130.17	40.0	4850.0	1620.0	31	25.04	980.0	14000.0	2250.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						4	0.69	420.0	1100.0	650.0
Ճամբարակ								100.0	500.0	200.0
Մարտունի								100.0	4000.0	750.0
Սևան								100.0	1000.0	385.0
Վարդենիս						5	6.74	60.0	1180.0	270.0
Լոռու մարզ										
Ալավերդի								360.0	5500.0	930.0
Գուգարք						2	0.94	500.0	6000.0	1800.0
Սպիտակ								500.0	3300.0	1000.0
Ստեփանավան						9	11.74	180.0	4000.0	460.0
Տաշիր						6	7.91	100.0	400.0	240.0
Կոտայքի մարզ										
Աբովյան						51	15.89	600.0	20000.0	5200.0
Եղվարդ	1	1.00	350.0	350.0	350.0	26	21.76	380.0	10000.0	3470.0
Հրազդան						7	13.18	250.0	6000.0	1000.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						8	6.71	550.0	2500.0	720.0
Ամասիա						1	2.00	80.0	525.0	180.0
Անի						5	12.05	240.0	800.0	295.0
Աշոցք						3	5.41	60.0	210.0	160.0
Արթիկ	3	2.92	270.0	595.0	385.0	1	1.00	140.0	800.0	290.0

Սյունիքի մարզ										
Գորիս						12	10.12	200.0	1600.0	540.0
Կապան								120.0	2000.0	330.0
Մեղրի						1	0.31	400.0	4240.0	850.0
Սիսիան						4	6.02	90.0	1500.0	320.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						8	6.90	260.0	4000.0	2350.0
Վայք						7	2.49	120.0	3400.0	950.0
Տավուշի մարզ										
Բերդ								100.0	2000.0	660.0
Իջևան								530.0	4000.0	1500.0
Նոյեմբերյան						2	1.41	100.0	8340.0	650.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2004թ. նոյեմբերին հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են բնակելի կառուցապատման հողերի 374 առուվաճառքի գործարքներ, որից 99-ը աճուրդային վաճառքներ և 2-ը՝ դատարանի վճռով գործարքներ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/				
	Միավորների քանակը	Մավերետը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Միավորների քանակը	Մավերետը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						41	44988.0	250.0	8000.0	3250.0
Ապարան								250.0	1400.0	340.0
Թալին	1	1400.0	90.0	90.0	90.0	1	2270.0	100.0	800.0	140.0
Ծաղկահովիտ								100.0	800.0	140.0
Արարատի մարզ										
Արտաշատ	66	73885.0	325.0	505.0	415.0	12	11570.0	300.0	6000.0	1050.0
Մասիս						25	18320.0	300.0	20000.0	1300.0
Վեդի	11	11080.0	100.0	490.0	450.0	9	9440.0	250.0	2200.0	760.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						10	9450.0	300.0	5000.0	1200.0
Բաղրամյան						2	2400.0	180.0	600.0	220.0
Վաղարշապատ	14	20400.0	230.0	755.0	565.0	17	15150.0	300.0	10000.0	1820.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ								300.0	2000.0	600.0
Ճամբարակ								100.0	300.0	160.0
Մարտունի						1	740.0	200.0	600.0	250.0
Սևան	4	13200.0	225.0	225.0	225.0			200.0	2000.0	260.0
Վարդենիս								100.0	300.0	120.0
Լոռու մարզ										
Այվերդի								150.0	600.0	210.0
Գուգարք						1	600.0	150.0	5200.0	820.0
Սպիտակ								140.0	900.0	180.0
Ստեփանավան	1	300.0	100.0	100.0	100.0	2	2100.0	100.0	600.0	160.0
Տաշիր								100.0	300.0	135.0

Կոտայքի մարզ										
Աբովյան	1	800.0	620.0	620.	620.0	49	50408.0	300.0	10000.0	2250.0
Եղվարդ						84	79860.0	300.0	10000.0	2550.0
Հրազդան						10	15489.0	300.0	8000.0	1600.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						3	6780.0	250.0	3400.0	450.0
Ամասիա								100.0	300.0	135.0
Անի								150.0	400.0	185.0
Աշոցք								90.0	300.0	120.0
Արթիկ	1	1200.0	150.0	150.0	150.0	1	400.0	150.0	900.0	210.0
Սյունիքի մարզ										
Գորիս								150.0	1200.0	400.0
Կապան								150.0	1400.0	410.0
Մեղրի								150.0	900.0	230.0
Սիսիան						1	1710.0	150.0	900.0	250.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						1	320.0	150.0	2200.0	350.0
Վայք								170.0	1400.0	225.0
Տավուշի մարզ										
Բերդ								100.0	1400.0	170.0
Իջևան						2	794.0	150.0	2200.0	610.0
Նոյեմբերյան						1	1450.0	100.0	1400.0	210.0

2004թ. նոյեմբերին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 10 գործարքներ 3.81 հա մակերեսով, ընդ որում 7-ը՝ Արարատի /2.21 հա/, 2-ը՝ Արմավիրի /1.52 հա/ և 1-ը՝ Տավուշի /0.08 հա/ մարզերում:

2004թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 744 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 8.1%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 31.3%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2004թ. հոկտեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 10.5%-ով, իսկ 2003թ. նոյեմբերի համեմատ՝ 19.2%-ով:

2004թ. նոյեմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 52 բնակարանների, 15 անհատական բնակելի տների, 193 հասարակական, 16 արտադրական նշանակության օբյեկտների, 463 միավոր հողերի և 5 ավտոտնակի վարձակալության գործարքներ:

2004թ. նոյեմբերին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 36 վարձակալության գործարքների քանակները 2004թ. հոկտեմբերի համեմատ նվազել են 39.0%-ով, իսկ 2003թ. նոյեմբերի համեմատ աճել են 5.9%-ով:

Ընդհանուր առմամբ, 2004թ. նոյեմբերին հանրապետությունում վարձակալվել են 4532.95 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 9.80 հա Երևանում/: Մարզերում վարձակալված հողերից 1680.40 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության /որից 5.45 հա նախկին պահուստային/, 10.66 հա բնակավայրերի, 9.59 հա արդյունաբերական օբյեկտների, 26.50 հա հատուկ պահպանվող տարածքների, 2796.00 հա անտառային հողեր: Հողերի վարձակալության առավել մեծ մակերեսներ են արձանագրվել Վայոց Ձոր մարզում՝ 2522.09 հա, որից 121.25 հա գյուղատնտեսական նշանակության:

2004թ. նոյեմբերին համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 105.00 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2004թ. նոյեմբերին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական

նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	0	0.00	10	21.10
Արարատ	0	0.00	49	128.18
Արմավիր	0	0.00	5	22.50
Գեղարքունիք	0	0.00	11	12.24
Լոռի	0	0.00	30	180.34
Կոտայք	0	0.00	37	61.04
Շիրակ	4	105.00	61	973.85
Սյունիք	0	0.00	12	39.46
Վայոց Ձոր	0	0.00	25	121.25
Տավուշ	0	0.00	4	15.45
Ընդամենը	4	105.00	244	1575.41

2004թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 880 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.6%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2003թ. նոյեմբերի համեմատ աճել է 59.1%-ով, իսկ 2004թ. հոկտեմբերի համեմատ՝ 19.4%-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 32.2%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /38.6%/, հասարակական նշանակության օբյեկտների /18.0%/, առանձնատների /14.0%/ և հողերի /25.3%/, նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 391 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2004թ. հոկտեմբերի համեմատ աճել է 17.1%-ով, իսկ 2003թ. նոյեմբերի համեմատ՝ 2.1 անգամ:

Ընդհանուր առմամբ, 2004թ. նոյեմբերին հանրապետությունում գրավադրվել են 195.68 հա /այդ թվում 3.06 հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 190.41 հա գյուղատնտեսական նշանակության: Հողերի առավել մեծ մակերեսներ են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 115.60 հա, բոլորն և գյուղատնտեսական նշանակության:

2004թ. նոյեմբերին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար 24 և 8 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.3%: 2003թ. նոյեմբերի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 30.4% -ով, իսկ 2004թ. հոկտեմբերի համեմատ աճել է 2.3 անգամ: Մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում՝ 31.2%:

2004թ. նոյեմբերին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1530 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2003թ. նոյեմբերի համեմատ աճել է 57.1%-ով, իսկ 2004թ. հոկտեմբերի համեմատ՝ նվազել 1.5%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.7%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /55.6%/: